Ք-24

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ

ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ (ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ) 1918-1939 թթ.

Է. 00.02-«Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսությունը ՊՄ. Զրգանյանի

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սաֆրաստյան Ռ.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Հայրունի Ա.Ն.

պ.գ.թ. Մելքոնյան Ք.Ֆ.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հուլիսի 1-ին, ժ. 13.00-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում, (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 30 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո միջազգային հարաբերություններում լուրջ փոփոխություններ կատարվեցին. սկզբնավորվեց ուժերի վերադասավորման և ազդեցության ոլորտների վերաբաժանման անզիջում պայքար: 1918-1939 թթ. կարևոր մի փուլ էր թե՛ Գերմանիայի, թե՛ Թուրքիայի պատմության մեջ, քանի որ երկու երկրներն էլ պատերազմում պարտություն էին կրել, և ձգտում էին հաղթահարել դրա բացասական հետևանքները և ուժեղացնել իրենց դիրքերը աշխարհում: Իրադարձությունների զարգացման նման ընթացքին զուգահեռ՝ 1919 թ. սկսած և գնալով վերելք ապրող քեմալական շարժումը սկիզբ դրեց Թուրքիայի արտաքին քաղաքական ուղենիշների ձևավորմանը. մասնավորապես՝ հանրապետական Թուրքիան 20-30-ական թթ. տնտեսապես ուժեղացավ և Գերմանիայի հետ դաշնակցային սերտ հարաբերություններ հաստատելով՝ կարողացավ տարածաշրջանում ամրապնդել իր դիրքերը, ինչն ուղղակիորեն առնչվում է ժամանակակից գերմանա-թուրքական հարաբերություններին:

Սույն թեմայի հետազոտումը հնարավորություն է տալիս ավելի խորը ըմբռնելու մեր օրերում երկու երկրների միջև ծավալվող հարաբերությունների առանձնահատկությունները: Դրա արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ գերմանա-թուրքական հարաբերությունների գիտական ուսումնասիրությունն ու պատմական քննությունը ներկա աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում, մասնավորապես Մերձավորարևելյան տարածաշրջանի բազմաշերտ հակասությունների դաշտում քաղաքական կարևոր նշանակություն են ստանում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել ու վերլուծել Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը ընկած ժամանակաշրջանում գերմանա-թուրքական դաշնակցային հարաբերությունները՝ բացահայտելով դրանց

առանձնահատկությունները և փոխակերպման հիմնական միտումները, ինչպես նաև բացահայտել այդ հարաբերությունների շրջանում առկա հիմնահարցերը: Այդ նպատակը իրականացնելու համար անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին.

--ներկայացնել Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո գերմանա-թուրքական հարաբերությունների փոխակերպման հիմնական խնդիրները, վեր հանել այդ հարաբերությունների ռազմավարական առանձնահատկությունները,

--անդրադառնալ Թուրքիայի տնտեսության արդիականացմանը միտված գերմանական կապիտալի ներհոսքին,

--ներկայացնել 1929 թ. բռնկված համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը գերմանա-թուրքական ապրանքաշրջանառության վրա,

--լուսաբանել դիտարկվող ժամանակաշրջանում գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունների հիմնական ուղղությունները, ներկայացնել հիշյալ հարաբերություններում շահերի բախումը,

--ներկայացնել Գերմանիայի դիրքորոշումը իտալա-թուրքական հարաբերությունների վատթարացման համատեքստում,

--ներկայացնել 20-30-ական թթ. գերմանա-թուրքական գիտակրթական և մշակութային հարաբերությունները, վեր հանել այդ հարաբերությունների առանձնահատկությունները,

--վերլուծել Թուրքիայի քաղաքական հարաբերությունները նացիստական Գերմանիայի հետ և այդ «քողի» ներքո թուրք-անգլիական հարաբերությունների վերադասավորման նպատակները,

-- լուսաբանել Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Թուրքիայի նկատմամբ արևմտյան երկրների դիրքորոշումների ծևաչափը և միջազգային հարաբերություններում տեղի ունեցող քաղաքական խմորումներում Թուրքիայի որպես վստահելի «դաշնակցի» դերակատարությունը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության թեման հայ պատմագրության մեջ համալիր ուսումնասիրության չի ենթարկվել, թեև

քննարկվող որոշ խնդիրների կապակցությամբ առանձին հետազոտություններում և հոդվածներում կատարվել են որոշ անդրադարձներ:

Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել և լուսաբանել գերմանա-թուրքական սոցիալ-տնտեսական և դրանցից բխող քաղաքական հարաբերությունները հիշյալ ժամանակաշրջանում, ներկայացնել երկկողմ փոխհարաբերությունների զարգացման բացահայտ և խորքային դինամիկան:

Հետազոտության շրջանակներում գիտական հանրությանն են ներկայացվում գերմանա-թուրքական քաղաքական և տնտեսական հարաբերություններին վերաբերող չուսումնասիրված և ներկայացվող թեման նորովի լուսաբանող արխիվային մի շարք կարևոր փաստաթղթեր:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունը ընդգրկում է 1918-1939 թթ., այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը ընկած ժամանակահատվածում Գերմանիայում և Թուրքիայում տեղի ունեցան քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական արմատական փոփոխություններ, որոնք իրենց կնիքը դրեցին երկկողմ հարաբերությունների վրա:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմագիտական և հումանիտար գիտություններում կիրառվող գիտական հետազոտության մի շարք ընդհանուր մոտեցումներն են, մասնավորապես պատմահամեմատական, համադրական և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Եզրահանգումները կատարվել են սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի և թեմային առնչվող գիտական ուսումնասիրությունների համալիր վերլուծության հիման վրա:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության թեման ունի ոչ միայն գիտական, այլ նաև գործնական, մասնավորաբար քաղաքական կիրառական կարևոր նշանակություն: Առաջ քաշված դրույթները, մեկնաբանությունները, եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության՝ գերմանական և թուրքական ուղղությունների տեսական հիմքերը մշակելու տեսանկյունից:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են նաև ատենախոսի գիտական գործուղման ընթացքում, մասնավորապես Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) Գյոթինգեն քաղաքի Գեորգ-Ագուստ համալսարանի թյուրքագիտության բաժնի պրոֆեսորներ Կլաուս Ռոհբորնի և Փիթեր Լաութի հետ: Ատենախոսության հիմնական դրույթներն և եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության համառոտ տեսություն: Ատենախոսությունը շարադրվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն, անգլերեն և գերմաներեն հրատարակված տարաբնույթ գրականության հիման վրա: Ուսումնասիրության մեջ կարևոր տեղ է հատկացվել Գերմանիայի և Թուրքիայի դիվանագիտական փաստաթղթերին ու հայտարարություններին: Առանձնակի կարևորություն է տրվել սկզբնաղբյուրներին, որոնք գտնվում են Գյոթինգեն քաղաքի Գեորգ-Ագուստ համալսարանի գրադարանի արխիվային պահոցում[1]: Նույն տեղում են պահվում ատենախոսի կողմից մանրամասն ուսումնասիրված գերմանա-թուրքական հարաբերությունների տնտեսական խնդիրները

[1] Տե՛ս, George-August Universität Bibliothek Göttingen. Akten zur deutschen Auswärtigen Politik 1918-1945, Serie B, 1925-1933, Band 1, (Deutschlands Beziehungen zu Frankreich Grossbritanien, Belgien sowie Deutsche Entwaffnung, Reparationen, Völkerbund und Internationale Abrustung), Göttingen, 1966, Տե՛ս նաև Akten zur deutschen Auswärtigen Politik 1918-1945. Serie D, 1937-1945, Band 10-13, Serie E, Band 1-8. 1945, Band-10-13, Serie E, Band 1-8. Göttingen, 1966.

լուսաբանող մի շարք փաստաթղթեր[2]: Հայ պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացվում են նաև Կոբլենց քաղաքի դաշնային արխիվում պահվող 1934-1937 թթ Գերմանիայի արտաքին տնտեսական քաղաքականությանը վերաբերող կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերը[3]:

Գերմանա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պարունակում պետական-քաղաքական և դիվանագիտական գործիչներ Ֆ. Պապենի[4], Ռ. Նադոլնիի[5], Ի. Ինոնյուի[6], հուշագրությունները և աշխատությունները որոնք խիստ սուբյեկտիվ բնույթ ունեն, ուստի արժանացել են հեղինակի քննադատությանը:

Գերմանա-թուրքական հարաբերությունների համակողմանի լուսաբանման համար կարևոր աղբյուր են ծառայել նաև գերմանացի պատմաբանների աշխատությունները և ուսումնասիրությունները, որոնք քննական վերլուծության են ենթարկվել, քանի որ դրանցից շատերը իրադարձությունները լուսաբանում են միայն Գերմանիայի քաղաքական և ֆինանսատնտեսական շահերի տեսանկյունից: Գերմանացի հեղինակների աշխատություններից առանձնանում են պատմաբաններ Վ. Մասսերի[7], Գ. Յեքեի[8] հետազոտությունները, որոնցում մանրամասն քննարկված են Վայմարյան հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության նպատակներին ու խնդիրներին վերաբերող կարևորագույն հարցեր,

[2] Տե՛ս, George-August Universität Bibliothek Göttingen., Statistiken Deutschland-Türkei, Teil 2, Nr 14173., Das deutsch-türkische Wirtschaftsabkommen von 1937. Statistiken Teil B. Kap 5, V2.

[3] Տե՛ս Bundesarchiv Koblenz., Abkommen über der devision und Zahlungsverkehr mit ausländischen Staaten, vom 28.7.1934-9.8.1937., R 22/4435. Protokoll betreffend Fragen als Zahlungs und Wahrenverkehrs zwischen Deutschland und der Türkei., Berlin15.4.1935. Band 1., Nr 14172.

[4] Papen F., Memories, Boston 1953.

[5] Nadolny R., Mein Beitrag, Wiesbaden, 1955.

[6] İnönü İ., Hatıralar, Ankara, 1985,1987, kitap1,2.

[7] Maser W., Zwischen Kaiserreich und NS-Regime. Die erste deutsche Republik 1918 bis 1933, Bonn-Berlin 1992.

[8] Jäscke G., Geschichter der Türkei seit dem Waffenstillstrand von Mudros. Handbuch des Orientalistik, 6. Köln 1952.

ինչպես նաև լուսաբանվում են այդ ժամանակահատվածում Թուրքիայում տիրող ներքաղաքական իրադրությանը վերաբերող մի շարք խնդիրներ:

Առաձնապես կարևոր են 1918-1933 թթ. գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունների մասին Գ. Շվանիցի[9], Վ. Գումփելի[10], Վ. Թրոյե[11] աշխատությունները, որոնցում ներկայացվում են գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունները համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին: Հ. Գրիմմը[12] Գերմանիայի տնտեսական շահերով բացատրում է Գերմանիայի ընդգծված բարեկամական վերաբերմունքը Թուրքիայի հանդեպ:

Հ. Յաքոբսենի[13], Ի. Ֆլաշհաուերի[14] աշխատություններում ներկայացվում են հիտլերյան Գերմանիայի նացիստական գաղափարախոսության տարածման նպատակները արտաքին քաղաքականության միջոցով: Տեղին է նշել Ա. Քյունի[15] աշխատությունը, որը փաստական տվյալներ է պարունակում Թուրքիայում նացիստական գաղափարախոսությունը տարածելու և ֆինանսական օժանդակություն ցույց տալու վերաբերյալ:

Թեմայի ուսումնասիրության առումով կարևոր է նաև Ու. Շիրերի[16] աշխատությունը, որտեղ հեղինակը չի սահմանափակվում միայն նացիստական կուսակցության գործունեության էությունը ներկայացնելով, այլև անդրադառնում է Հիտլերի արտաքին ռազմավարական քաղաքականության հիմնախնդիրներին:

[9] Schwanitz G., Bankiers und Diplomaten., Zur Geschichte der deutschen Orientbank 1906-1946. Berlin 2002.

[10] Werner G., Wirtschaftssystem und Wirtschaftsentwicklung in Südosteuropa Handbuch, Band IV, Türkei. Göttingen 1985.

[11] Treue W., Das Dritte Reich und die Westmächte auf dem Balkan. Zur Struktur der Außenhandelpolitik Deutschlands, Großbritanniens und Frankreichs 1933-1939. Viertelyahreshefte für Zeitgeschichte 1, Göttingen 1953.

[12] Grimm H., Politik und Wirtschaft in die Krise., Berlin 2001.

[13] Jacobsen H., Nationalsozialistische Außenpolitik 1933-1938. Frankfurt-Berlin 1968.

[14] Fleischhauer I., Das Dritte Reich. Stuttgart 1983.

[15] Kuhn A., Hitlers Außenpolitische Programm. Stuttgart 1970.

[16] Ширер У., Взлет и падение 3 реха, Москва 2004.

Գիտակրթական և մշակութային երկկողմ հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ են պարունակում Զ. Քոչակի[17] և Ն. Ֆրիցի[18] աշխատությունները, որտեղ քննարկվում են Գերմանիայի օժանդակությամբ թուրքական մշակույթի ու կրթության ոլորտների եվրոպականացման գործընթացները: Մասնավորապես Ն. Ֆրիցը անդրադառնում է օսմաներենից լատինատառ գրության անցնելու շրջանում ազգությամբ գերմանացի ուսուցիչ Հոյսերի թուրք-գերմաներեն առաջին բառարանի ստեղծմանը: Զ. Քոչակի և Ն. Ֆրիցի աշխատությունները հիմնականում վերաբերում են Թուրքիայում մշակութային և գիտակրթական ոլորտում գերմանական մասնագետների խաղացած դերին: Զ. Քոչակը շրջանցում է այդ ասպարեզում հայազգիներ Հակոբ Մարթայանի (Հակոբ Դիլաչար), Գևորգ Շիմքեշյանի և այլ հայ մասնագետների դերը լատինատառ թուրքերենի ստեղծման գործընթացում:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ առանձին հիմնախնդիրներ լուսաբանվել են նաև հայ պատմաբանների կողմից: Անվանի թուրքագետ Ռ. Կորխմազյանը «Գերմանա-թուրքական հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին»[19] աշխատության մեջ ներկայացնում է նաև գերմանա-թուրքական քաղաքական հարաբերությունները մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը, որտեղ Թուրքիայի արտաքին քաղաքականության խնդիրն էր Թուրքիայի տարածքային ամբողջականության և միջազգային քաղաքական դաշտում «չեզոքության» պահպանումը: Հեղինակը Գերմանիայի արտաքին քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ հաճախ համարում է «չստացված», այն է սոսկ տնտեսական սերտ հարաբերությունների արդյունք:

[17] Koçak C. Türk-alman ilişkileri iki dünya savaşı arasındaki dönemde siyasal, kültürel, askeri ve ekonomik ilişkileri, Ankara 1991.

[18] Fritz N., Deutsche Gelehrte Politiker und Künstler in der Emigration 1933-1953. Frankfurt Am Mein, 1980.

[19] Корхмазян Р. С. Турецко-германские отношения в годы второй мировой войны. Издательство Академия Армянской ССР, Ереван, 1977г.

Թեմային առնչվող արժեքավոր աղբյուր է Բ.Մ. Պոցխվերիայի «Թուրքիան համաշխարհային երկու պատերազմների միջև»[20] աշխատությունը, որտեղ քննարկվում է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և Խորհրդային Միության հետ Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությունը, անդրադարձ է կատարվում նեղուցների խնդրին, Գերմանիայի առաջ քաշած պայմաններին:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, աշխատանքի փորձաքննությունը, տրվում են թեմային վերաբերող աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Գերմանիայի և Թուրքիայի հարաբերությունները 1918-1933 թթ.»**, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Գերմանա-թուրքական հարաբերությունները Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո»**, ուսումնասիրված են երկու երկրների բնականոն հարաբերություններ վերահաստատելու օբյեկտիվորեն հասունացած խնդիրը և այդ ճանապարհին գործադրված քաղաքական և դիվանագիտական ջանքերը: Ցույց է տրվում, թե ինչպես, հակառակ Անտանտի երկրների, մասնավորապես Ֆրանսիայի վարած հակագերմանական քաղաքականության Գերմանիան սերտացրեց Թուրքայի հետ հարաբերությունները: Մանրամասն ներկայացվում են գերմանա-թուրքական հարաբերությունների պաշտոնական հաստատման, դիվանագիտական կապերի ամրապնդման և տնտեսական հարաբերությունների սկզբնավորման գործընթացները, որոնք

[20] Поцхверия Б. М., Турция между двумя мировыми войнами., Очерки внешней политики., Москва 1992 г.

շարունակվում են մինչ օրս: Գերմանիայի՝ Թուրքիայի հետ համագործակցության խորացմանը զուգահեռ՝ անդրադարձ է կատարվում նաև վերջինիս եվրոպական երկրների հետ բազմակողմ հարաբերություններին:

Երկրորդ ենթագլխում՝ **«Երիտթուրքերի փախուստը Գերմանիայի օժանդակությամբ»**, ներկայացվում է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, 1918 թ. հոկտեմբերի 7-ին Թալեաթ փաշայի կառավարության հրաժարականը, ապա՝ նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը երիտթուրք յոթ պարագլուխների փախուստը:

Երրորդ ենթագլխում՝ **«Գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունները 1924-1933 թթ.»**, վերլուծված են այն հիմնախնդիրների ամբողջությունը, որը ընդգրկում է գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունների բարելավման և արդիականացման մի նոր շրջան: Ենթագլխում ներկայացվում են Գերմանիայի աջակցությամբ Թուրքիայի տնտեսության զարգացմանն ուղղված բոլոր այն միջոցները, որոնք նպաստեցին, որ Թուրքիան կարճ ժամանակահատվածում արդիականացնի իր տնտեսությունը: Այստեղ անդրադարձ է կատարվում ինչպես թուրքական երկաթուղիների և շարժակազմերի հետգնման գործընթացներին, այնպես էլ 1929 թ. սկիզբ առած համաշխարհային տնտեսական ճգնաժամին, որից անմասն չմնաց Թուրքիան:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Գերմանա-թուրքական հարաբերությունները 1933-1936 թթ.»**, բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «**Նացիստական Գերմանիան և նրա ազդեցությունը Թուրքիայի վրա**», ներկայացվում է Գերմանիայի ներքաղաքական փոփոխությունները և Թուրքիայի քաղաքական, տնտեսական հարաբերությունները նացիստական Գերմանիայի հետ:

Երկրորդ ենթագլխում **«Գերմանա-թուրքական հարաբերությունները 1924-1935 թթ. թուրք-անգլիական, թուրք-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների համատեքստում»**, ներկայացվում է գերմանա-թուրքական հարաբերությունների

համատեքստում թուրք-անգլիական և թուրք-ֆրանսիական քաղաքական հարաբերությունների զարգացման նախադրյալները:

Երրորդ ենթագլխում՝ **«Գերմանա-թուրքական գիտակրթական և մշակութային հարաբերությունները 1920-1930 թթ.»**, ցույց է տրվում, որ գերմանա-թուրքական կրթական և մշակութային հարաբերությունները նորովի վերանայվեցին 1924 թ. մարտի 3-ին Անկարայում ստորագրված երկկողմ բարեկամության պայմանագրով, որով Գերմանիայի աջակցությամբ և ֆինանսավորմամբ Թուրքիայում ստեղծվում են «Türkische Post»-ը, գյուղատնտեսական ոլորտին առնչվող գիտական մի շարք կենտրոններ ու լաբորատորիաներ Անկարայի համալսարանում: Ըստ այդմ՝ գերմանացի մասնագետները իրավունք էին ստանում դասավանդելու Թուրքիայի համալսարաններում: Հիտլերի իշխանության գալուց հետո նոր թափ ստացավ գերմանական կրթական համակարգի ներթափանցումը Թուրքիա: Գերմանիան ֆինանսավորում էր թուրք ուսանողների կրթությունը գերմանական բարձրագույն հաստատություններում և հատուկ ուշադրություն էր դարձվում Գերմանիայում թուրքական բանակի սպայական անձնակազմի վերապատրաստմանը:

«Գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունները 1933-1939 թթ.» չորրորդ ենթագլխում ներկայացվում է Գերմանիայի ճկուն վարկային քաղաքականությունը Թուրքիայում, որի շնորհիվ նա կարողացավ հաստատուն դիրք զբաղեցնել Թուրքիայի տնտեսության և արդյունաբերության ոլորտներում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Գերմանա-թուրքական քաղաքական հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմի նախաշեմին»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Գերմանա-թուրքական քաղաքական հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմի նախաշեմին»**, քննարկվում են նացիստական Գերմանիայի արտաքին քաղաքականության նվաճողական նկրտումները, հատկապես նացիստական բլոկի մեջ Թուրքիային ներգրավելու նպատակով գերմանացի դիվանագետների ձեռնարկած քայլերը, Ֆրանսիայի և

Անգլիայի թողտվությամբ ու Գերմանիայի հարկադրանքով Եվրոպան երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու հիմնահարցերը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Գերմանա-թուրքական հարաբերությունները ֆաշիստական Իտալիայի կողմից Ալբանիայի գրավման համատեքստում»**, քննության են առնվել ինչպես գերմանա-թուրքական հարաբերություններին, այնպես էլ Մերձավոր Արևելքում ֆաշիստական Իտալիայի վարած ռազմաշունչ քաղաքականությունը և Ալբանիայի գրավմանը առնչվող հիմնահարցերը:

Եզրակացության մեջ ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքները.

1. Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը միջազգային հարաբերություններում սկիզբ դրեց ուժերի վերադասավորման և հետպատերազմյան աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևման մի գործընթացի, որտեղ հաղթող պետություններից յուրաքանչյուրի հնարավորությունները որոշվեցին ուժերի հարաբերակցությամբ:

2. Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի շահերը խաչաձևեցին Մերձավոր Արևելքում, որտեղ հակասությունները պայմանավորված էին Օսմանյան կայսրության նախկին տարածքների բաժանման շուրջ: Մինչ Անգլիան և Ֆրանսիան չէին կարողանում ընդհանուր հայտարարի գալ, Գերմանիան, ելնելով Թուրքիայում իր տնտեսական, քաղաքական և ռազմական շահերից, ձգտեց ամեն գնով վերականգնել և ամրապնդել գերմանա-թուրքական հարաբերությունները: Գերմանա-թուրքական «ռազմական եղբայրությունը» չէր կարող երկար սպասել. հակառակ Անտանտի երկրների ճնշումներին 1924 թ. մարտի 3-ին կնքվեց գերմանա-թուրքական պայմանագիրը:

3. Քեմալ Աթաթուրքի կառավարման տարիներին Թուրքիայի Հանրապետության ներքին բարեփոխումների հիմքում դրվեց տնտեսության արդիականացման խնդիրը: Կարճ ժամանակահատվածում Քեմալ Աթաթուրքին հաջողվեց գերմանա-թուրքական դիվանագիտական հարաբերությունների միջոցով գերմանական տնտեսվարող սուբյեկտների ֆինանսավորումը ուղղել Թուրքիայի տնտեսության զարգացմանը:

4. 20-30-ական թթ. գերմանա-թուրքական հարաբերությունների կարևորագույն ուղղությունները դիտարկելով, կարող ենք շեշտել, որ միջազգային իրադարձությունների զարգացման ընթացքին զուգահեռ երկու երկրները կարողացան դաշնակցային սերտ հարաբերություններ հաստատելով՝ ամրապնդել իրենց դիրքերը:

5. 1930-ական թթ. սկզբներից անգլո-ֆրանս-թուրքական հարաբերությունները՝ պայմանավորված հիտլերյան Գերմանիայի և նրա գաղափարակից ֆաշիստական Իտալիայի մի շարք կարևոր գործոններով, նոր հարթություն տեղափոխվեցին: Թուրքիայում Ֆրանսիայի և Անգլիայի «բարեկամության» նախադրյալները, որոնք թելադրված էին երկրորդ համաշխարհային պատերազմի վտանգով, շարունակեցին վարել «չմիջամտելու» քաղաքականություն՝ հուսալով խուսափել Գերմանիայի հետ հարաբերությունների բարդացումից:

6. Դեռևս 1928 թ. մայիսի 30-ին ստորագրված իտալա-թուրքական չեզոքության պայմանագիրը խոսում էր երկկողմ բարիդրացիական հարաբերությունների կայունացման մասին, սակայն ֆաշիստական Իտալիայի կողմից Դոդեկանեզյան ծովածոցի զավթումը բարդացրեց թուրք-իտալական հարաբերությունները: Գերմանական մամուլում Իտալիայի գործողությունները Դա հարմար առիթ ստեղծեց Անգլիայի համար՝ կայունացնել հարաբերությունները Թուրքիայի հետ և Ազգերի լիգայում Անգլիայի ճնշման ներքո Իտալիային ճանաչել որպես զավթիչ երկիր, որի վրա հիմնվելով՝ Ազգերի լիգան, որոշում ընդունեց Իտալիայի դեմ կիրառել տնտեսական ու ֆինանսական պատժամիջոցներ:

Ստենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները:

1. «Գերմանա-թուրքական հարաբերությունները Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո», էջ 166-172, Երևանի պետական համալսարան, պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, «գիտական հոդվածների ժողովածու», հատոր Բ., ԵՊՀ հրատարակչություն, 2013թ.:

2. «Գերմանա-թուրքական քաղաքական հարաբերությունները երկրորդ աշխարհամարտի նախաշեմին», էջ 51-58 Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիա, հասարակական գիտությունների «Լրաբեր», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2013, հատոր 3:

3. «Գերմանա-թուրքական տնտեսական հարաբերությունները 1920-1930-ական թթ.», «ՍԻՄ» տպագրատուն, հեղինակային հրատարակություն ՀՏԴ93/99, ԳՄԴ 63.3» Բ242, Վանաձոր 2014թ., 47 էջ:

БАГДАСАРЯН СТЕПАН АЛЕКСАНОВИЧ
ГЕРМАНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРИОД МЕЖДУ ОКОНЧАНИЕМ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ ДО НАЧАЛА ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (ТРАНСФОРМАЦИИ СОЮЗНИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ)
1918-1939 г г.

Дисертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 "Всемирная история".
Зашита состоится 1-го июля 2015 г., в. 13:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедение НАН РА, по адресу: 0019. Г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Целью диссертации является раскрытие сущности двусторонних германо-турецких отношений в период с окончания Первой мировой войны до начала Второй мировой войны.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

Во введении представлены актуальность темы, цели и задачи диссертации, отмечено значение поставленных вопросов, раскрыта научная новизна, прикладное значение диссертации, дан краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации под названием ***«Отношения между Германией и Турцией в 1918-1933 гг.»*** содержит четыре части. В первой части – **«Германо-турецкие отношения после окончания Первой мировой войны»** – рассмотрены причины охлаждения германо-турецких отношений после окончания Первой мировой войны, политические устремления стран Антанты, в частности Франции, в Турции, показано, как вопреки странам Антанты, Германия возобновила германо-турецкие отношения. Подробно представлены процессы установления официальных германо-турецких отношений, укрепления дипломатических связей и зарождения взаимного экономического сотрудничества – процессы, которые продолжаются по сей день.

Во второй части – **«Бегство младотурков при пособничестве Германии»** – рассмотрены серьезные перемены, произошедшие во внутриполитической жизни Турции после окончания Первой мировой войны, отставка правительства Талеата-паши 7 октября 1918 г., а затем бегство семерых младотурецких главарей в ночь с 1-го на 2-ое ноября.

Третья часть озаглавлена **Германо-турецкие экономические отношения в 1924-1933 гг.»**. Этот период стал новым этапом улучшения и обновления германо-турецких экономических отношений, начало которому было положено 3 марта 1924 г. заключением двустороннего дружественного договора в Анкаре. В данной части рассмотрены те средства, направленные Германией на развитие экономики Турции, при помощи которых Турция сумела в короткие сроки актуализировать все, что было связано с экономикой страны.

Вторая глава диссертации под названием ***«Германо-турецкие отношения в 1933-1936 гг.»*** состоит из четырех частей. В первой части – **«Нацистская Германия и ее влияние на Турцию»** – представлены внутриполитические перемены в Германии, а также продолжение двусторонних германо-турецких отношений после прихода к власти нацистов в Германии.

Во второй части – **«Германо-турецкие отношения в 1924-1935 гг. в контексте турецко-английских и турецко-французских дипломатических отношений»** – представлен ряд происходивших в Европе политических перемен, обусловленных захватнической политикой фашистской Италии и гитлеровской Германии. Все это привело к улучшению англо-турецких отношений.

В третьей части – **«Германо-турецкие научно-образовательные и культурные отношения в 1920-1930 гг.»** – показано, что германо-турецкие отношения в сфере образования и культуры были заново пересмотрены подписанным 3 марта 1924 г. в Анкаре двусторонним дружественным договором, по которому при поддержке и финансировании Германии в Турции создаются «Türkische Post», ряд научных центров и лабораторий в Университете Анкары, связанных с сельскохозяйственной сферой.

В четвертой части – **«Германо-турецкие экономические отношения в 1933-1939 гг.»** – представлены как Германия благодаря кредитной политике сумела занять устойчивое место в промышленной отрасли Турции, в частности, предоставив Турции кредит в 150 млн. Последняя вытеснила Англию из промышленной сферы. До начала Второй мировой войны промышленность и экономика Германии с гражданских рельсов были переведены на военные, в результате чего вырос спрос на железо, чугун и другие металлы.

Третья глава диссертации под названием ***«Германо-турецкие политические отношения в преддверии Второй мировой войны»*** состоит из двух частей.

В первой части – **«Германо-турецкие политические отношения в преддверии Второй мировой войны»** – рассмотрены захватнические устремления внешней политики нацистской Германии, и особенно, предпринятые немецкими дипломатами шаги по вовлечению Турции в нацистский блок, процессы, в результате которых при попустительстве Франции и Англии и по принуждению Германии Европа была ввергнута во Вторую мировую войну.

Во второй части – **«Германо-турецкие отношения в контексте оккупации Албании фашистской Италией»** – затронуты вопросы, касающиеся как германо-турецких отношений, так и политики фашистской Италии на Ближнем Востоке, оккупации ею Албании и ее последующей политики.

В **Заключении** подытожены основные результаты работы.

STEPAN BAGHDASARYAN

GERMAN-TURKISH RELATIONS FROM THE END OF THE FIRST WORLD WAR TO THE BEGINNING OF THE SECOND WORLD WAR (TRANSFORMATIONS OF ALLIED RELATIONS) 1918-1939

The defense of the dissertation will take place at 13.00 on July 1, 2015, at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA.

Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History" 07.00.02

SUMMARY

The aim of the present dissertation is to cover comprehensively the German-Turkish relations from the end of the First World War to the beginning of the Second World War, to outline the main essence of the bilateral relations, to discuss the German-Turkish relations and to present the complexity of the studied topic.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusion and bibliography of the sources used. The research work is subdivided into three stages, based on the chronological perspective.

The first chapter, "The German-Turkish relations from 1918 to 1933", is divided into three subchapters.

The first subchapter presents a brief description of the suspension of German-Turkish relations after the First World War, the political aims of Entente countries in Turkey, particularly those of France that led its policy against France. It is also shown how Germany reaffirmed the German-Turkish relations, opposing the Entente countries.

The second subchapter, "Young Turks Escape with the Help of Germany", presents the rapid changes that occurred in Turkish political life after the end of the First World War. It is shown that the Young Turk leaders and government officials escaped from the country, aided by Germany.

The third subchapter is entitled "German-Turkish Economic Relations in the period of 1924-1933". This was a period when German-Turkish economic relations improved and were modernized on the basis of the Ankara bilateral friendship treaty, concluded on March 3, 1924.

The second chapter of the dissertation, "German-Turkish Relations in 1924-1936", consists of four subchapters.

The first subchapter "Nazy Germany and its Impact on Turkey" introduces the internal political changes that occurred in Germany, particularly the results of the 1929 Global Economic Crisis.

The second subchapter, "German-Turkish relations in 1924-1935 in the context of Turkish-British and Turkish-French Relations", presents the German-Turkish relations in the context of Turkish-British-French relations.

The third subchapter, "German-Turkish scientific-educational and cultural relations in the period of 1920-1939", refers to the educational and cultural relations between Germany and Turkey, which was revised on March 3, 1924 with the Ankara bilateral friendship treaty.

The fourth subchapter is "German-Turkish Economic Relations in 1933-1939". During those years Germany was able to take a stable position in the sphere of Turkish industry, due to credit policy.

The third chapter of the dissertation, "German-Turkish Political Relations at the beginning of the Second World War", consists of two subchapters.

The first subchapter, "German-Turkish Political Relations at the Beginning of the Second World War", the land-grabbing objectives of Nazy Germany's foreign policy, the measures taken by German diplomats that aimed at conquering Turkey in the frames of Nazi block are discussed.

The subchapter "German-Turkish Relations in the Context of Conquering Albania by Fascist Italy" presents the German-Turkish relations, the policy of fascist Italy in the Middle East, as well as discusses issues related to the conquest of Albania and also further policy.

The main results of the paper and the aims of the multilateral development of German-Turkish relations are summarized in the conclusion.